

# ԹԱՊՈՒԵՏ-ԴԵՒԻՐ \*



առնանք զողորմին տը տան։ Սանասարին,  
«Զըմէն՝ 1), Օղորմին տը տան։ Բաղբասարին.  
«Դառնանք զողորմին տը տան։ Էն Մենծ-Մէկրին,  
«Զըմէն։ Օղորմին տը տանք Ձևնէօվ-Ցէօվանին.  
«Դառնանք զողորմին տը տան։ Էն Թըռլան-Դաւթին,  
«Զըմէն։ Օղորմին տը տան։ Պըզտիկ-Մէկրին.  
«Դառնանք զողորմին տը տան։ Քեառուուն ճէօղ Դեղձուն-Ծամին»),  
«Զըմէն։ Օղորմին տը տան։ Խանդիթ-Խաթունին.  
«Դառնանք զողորմին տը տան։ Ճարպախար-Քամին,  
«Զըմէն։ Օղորմին տը տան։ Խաթմանայ-Բիշ-ղին.  
«Դառնանք զողորմին տը տան։ Ջիրին-Անախուն-Գէւհարին»\*).  
Ճէնճօղ էկանք փ-ը Մէկրի ճէօղին։

\*) Հազարը, սոյն վարիանտի պատմողը, Մոկաց երկրի Առնջջ գիւղին է, Յազակիմենց Մանուկի որդին, 60 տարեկան ծերունի է նա, բայց դեռ թարմութիւնը պահած։ Խնքը կարճանասակ էնիար դէմքով։ Ղաղարն այս նազըլը՝ սովորել է իւր Խայագիւղացի Պօղոս անունով մէկից, Ղաղարի ասելով աչդ։ Պօղոսը գիտէր այս նազըլէնք ճիւղն էլ, այս ևս յաւ Ղաղարն մօտ 15 տարի առաջ եղել է Բաշ-կալայում, մէտարի ժամանակով։ Եօթ՝ (7) տարի է անա, որ եկել է նա Կովկաս, իւր պահնիստութեն ժամանակն անց է կապանում նա ու Եջմիածնուր (ուր և գրի ենք առել սոյն վարիանտը 1899, յունիսին), և շըջակայքում։ ամառը հունձ է անում, աշնանը կոր բաղդակիցների հետ գնում է քրքարանակ վայրեր ։ Կէսոյ յէկըս» (թաղիք գործելու), իսկ ձմեռը գիտօրայքում բամբակ գգերով է պարապում։ Ղաղարը գիտէ նաև շուրջեւ իւր Խասնիքում պարապել է երկագործութեանը ։ գործ դնելով նաև իւր արենաստները։

Ինչ վերաբերում է գրութեանս ձևին՝ տեղաեղ գրել ենք ոտանաւորի ձևով, տեղ-տեղ՝ արծակ։ առաջին ձևով են երգերը և այն հատուածները, ուրնց իւրաքանչյուր տողում լրանում է մի միաք և զգալի է չափը (մեծավերջ-լմբն և վերջատանջ-անպետց)։ գործ ենք ածել հետևեալ պալմանական տառերը։ իւր թըր, ս, օր. էրէ-ն. + - փափուկ ր. : - փափուկ կ. 4 - փափուկ գ. - կիսակոկորդային ա. ՚ի-՚ի. օր. ՚իս. է-կոկորդային ի (մօտ. ա) է-օ-օւ։

1) Ամէն։ 2) Քառուուն ճիւղ ճամ ունեցող։

\* Սոյն վարիանտի պատմողն այս ողորմին երգում էր։

## Ը.

Սասում կէր<sup>1)</sup> Մհեր.

Մըսըր կէր Մելիք.

Մորամելիք սատկաւ<sup>2)</sup>,

Կնիկ թուղթ ճամպիսեց Սասնայ Մհերին,—

Մհեր Սասնայ թագաւոր էր.

Ասաց. «Կեսա կէօխ իմ խետ մէկ էնիս»<sup>3)</sup>:

Մհերն էլ կնկեան ասաց.

«Կնիկ, էլի շուրիս լըւց, իմ թըդարիքն տեհի,

Էրթամ Մելիքի կնիկն առնիմ:

Էսաց. «Տիւ ընչի կերթաս. էն տաճիկ ի, տիւ խայ—քրիստոնայ իս,  
ընչի կերթաս էնու խետ կէօխ մէկ էնիս»:

Մհեր ասաց. «Խուղլ»<sup>4)</sup> էն մարդու կէօխ էնի, ինչ կնիկ տայ, մարդ  
չառնի, իս տիւ էրթամ»:

Կնիկն ասաց. «Մը՛հեր, տիւ որ էրթաս քրդուն խառնուխ»<sup>5)</sup> չուր<sup>6)</sup>  
քառսուն տարի իմ տուն չես ի կեայ»:

Մհեր ձին խեծաւ ի՞նաց Մըսըր, Մելիքի կնիկ առից.

Ին ամիս, ին օր, ին սկաթ, ին դանդի<sup>7)</sup> դայ<sup>8)</sup> որ լըմըցաւ՝ Աստուած  
մէ տղայ տուփց, անուն դրին Մելիք:

Եշխարքը տղէ՛՝ տարը<sup>9)</sup> կը մեծանըն, էնիկ օրը կ'մեծանըր:

Որ տարին լըմըցաւ, կ'նոց էրեխացտերու—մէջ ճան<sup>10)</sup> կ'խաղէր:

Որ էրկու տարի յանց կացաւ՝ Մելիք էլաւ կնոց ավ—դուշ<sup>11)</sup>, կնոց ավ—  
դուշ, մէ վէրու<sup>12)</sup> մարալ<sup>13)</sup> զարկեց, դրից իրա թէկի վրայ, եկաւ տուն,  
Մհեր տեհաւ, էսաց, «վայ, ինչ էրի, խայու ճրագ խանդըցի, տաճկու  
ճրագ վառի»: Էլաւ սուս-փուս Մսրայ տիւս<sup>14)</sup> էլաւ էկաւ Սասուն<sup>15)</sup>:

Մուշտուլուր<sup>16)</sup> տարան Մհերի կնկն. կնիկ էլաւ տիւռ<sup>17)</sup> փակից:  
Մհեր կանչից էսաց, «Տիւռ պաց»:

Էսաց. «Էրթում իմ կերի, չուր քառսուն տարի տիւ իմ շէնլրէին չես  
ի կեայ».

Ասաց. «Կընիկ, հայու ճրագ հանդըցիր ինք, տաճկու ճրագ վառիր ինք,  
Ասաց. պէ գիշիր մէ օր հաշուխնք, ցերեկն էլ մէ օր հաշուխնք, շա-

1) Կար; 2) փոխանակ Տեսու. այս բառն են գործածում մեր մէջ շարդ  
բոլոր ոչ-քրիստոնեաների համար; 3) Միասին պառկենք; 4) Պատմուածքի  
ընթացքում խառը գործ են ածւում թէ էռոց և թէ սոսց ձևերը; 5) Կողու  
6) Մինչև; 7) բոպէ; 8) Միջոց, ժամանակ; 9) Տարով; 10) Վէգ; 11) Որսին;  
12) Վալրենի; 13) Եղջերու; 14) Դուրս; 15) Աչքալուսէնք; 16) Դուռը;

\*) թէ Սասուն և թէ Սասուն անխտիր գործածական են այս վարիանտի  
մէջ:

բաթն էլ ամիս հաշուկնք, ամիսն էլ տարին հաշուկնք,—քռառուն տարի կ'ըմբնայ, քռառուն էլ աւելի կ'մնայ» (զի-վայ մէ էրթում չի մնայ)։

Կնիկ տէռ բաց էրաց, էսաց. «Տղամարդ որ կաց՝ կէօխ ի, կնիկ որ կաց՝ ոտ ի, չի կարաց տէռ պռնի մարդու վերաց, տէռ կ'պանամ կը կեաս տուն, Ըսուած մեղի մէկ տղաց կը տաց, ամաց մինչ կ'մեռ. նինք, տղէն անտէր կ'մնայ [խըզըրը<sup>1)</sup> վերաց]։

Ըսաց, «Ըսուած մէկ տղաց տաց, էրթաց Մելքի եալսէն<sup>2)</sup> պռնի, խայու ճրագ չը խանգի. Ըսու պախած գոռ գէլ չի ուտի»։

Ին ամիս, ին օր, ին սհամթ, ին դանդի դաց որ լմբնցաւ՝ Ըսուած տուից մէ տղաց էլաւ. տարան կնքին, անուն դրին Դառ-էն։

Որ տղէն պերին տուն՝ Մհերն էլ, կնիկն էլ խիւանդ ընդան։

Մհեր Ձէնէօվ-Ցէօվանին էսաց. «Կ'տանիս Մըսըր Մելքի կնիկ Դառթին կ'պախի»։

Էրկուսին վախճանք էկաւ, էրկուսն էլ մեռան ի բան ուժ ուտի։

## Բ.

Ճարպախար-Քամին, Բաթմանայ-Բէ-ղէն Յանձն մեռու մեռու մեռու Մհերի փահլիւանքտիրն են Ձէնէօվ-Ցէօվան

Դառթին տուից Բաթմանայ-Բէ-ղի շըկ, անուն դուն ընդան։

Ճարպախար-Քամուն, տարան Մըսըր։

Տարան Մըսամելքի կնկանը կուշտ, որ պախի Դառթին,

ին ծիծ կ'տաց, չի բռնի։

Մելքին էլ կնացիր էր ավ-դուշտ, ավ-դուշտից էկաւ, ասաց. «Էս ինչ տղաց քէօ զիրկն առիր ես»։

Ըսաց. «Որդի, քէօ ախպէրն ի, էւրդ իրան կնիկ Սասուն մեռած ի, էդ էլ քէօ ախպէրն ի, ճամպխած ի պախին։ Ես ծիծ կ'տամ, չի ուտի»։

Ըսաց. «Քէօ տունը աւերի. էնո խօր չունի՞ մեղր ու կարագ. ճամպխի պիրեն մէկ տիկ մեղր, մէկ տիկ կարագ, ուտի մեծանայ»։

Ճամպխեց պիրեց, տուից Դաւիթ պախեց։

Աշխարքի էրեխէք տարէ կ'մեծանին. Դաւիթ օրէ կ'մեծանէր.

Ճարպախար-Քամին, Բաթմանայ-Բէ-ղէն մնացին Մըսըր՝ Մելքի կուշտ։

Մելքին էլ չորս-խինդ տարեկան որ էլաւ՝ էլաւ խօր տեղ նստաւ.

Իրան զօշուն կառնէր կըրթէր տոշտ հէօլ<sup>3)</sup> խաղ կէնէր. Էնու հէօլն էլ իրեք խարիր վացցուն վեց լիտր դամուր<sup>4)</sup> էր.

<sup>1)</sup> Փախթ; <sup>2)</sup> օձիք; <sup>3)</sup> հոլ խաղալ, —փայտով խփում են մի փայտագնդի և հեռացնում; <sup>4)</sup> Երկաթ։

Դաւիթ մէ օր Մելքին մօրն էսաց. «Մելքին ասես ընձի տանի իր խետ հէօլ խաղ էնինք».

Յըրկուն օր Մելքին էկաւ՝ մէրն էսաց. «Առատուն ախպէրդ խետդ տար հէօլ խաղ էնի սորվի».

Մելքին էսաց. «Էնիկ Մհերի տղէն ի, վայ թը կոյ ըտեղ՝ վնաս աշխն».

Մէր խետ կուռաւ, ասաց. «Ճար».

Տարաւ սարի կէօխ տրից,

Զինք զօշուն առից չնաց տոշտ հէօլ խաղ կ'էնէր.

Էրկու ֆէրրզ<sup>1)</sup> էլ տրից Դաւթը պախեցող.

Դաւիթ ինադ էրաւ,

ին էրկու ֆէրրզ քաշեց պերից տուն.

Մելքին մէրն էսաց.

«Դաւիթ, ընջի շուտ էկար»

էսաց. «Վալլահ, ընձի դրից էր գէօտրկ կէօխ, զինք գնացիր էր տոշտ հէօլ խաղ կէնէր, պան մ' չիմ տեսսիր»:

Յըրկուն Մելքին օր էկաւ՝ Մելքին խետ կըռիւ էրաւ, ասաց. «Ախպէրդ տար կըշտիդ խետ վէ դիր, էն էլ հէօլ խաղ էնայ սովորի»:

Մելքիք առաւօտը զԴաւիթ էւր խետ տարաւ:

Որ չնաց հէօլ խաղ էրին,

Ճաշին նօրաթն էկաւ Մելքին.

Օր նօրաթն էկաւ Մելքին՝

Դաւիթ չնաց մտաւ փուսի մէջ:

Օր հէօլ կէրթէր կինէր փուսի մէջ,

ին զօշում բիրադի էկան,

Զկարացան զԴաւիթ էն փուսից խանին:

Մելքին էլ էսաց. «Տղերք, սազ էրէք<sup>2)</sup>,

Ես հէօլ կ'թալիմ, թըդ էրթայ Դաւիթ ըսպանի,

Տիւ ընձի ղընամիշ չէնէք<sup>3)</sup>,

Զասէւ թէ Մելքիք զարկից էւր ախպէր սպանից,

Տիւք աչքով կը տեսնէք:

Սազեր զարկին, Մելքիք զէօլ թայեց:

Հէօլ չնաց էջնէր Դաւիթի կըլսեւ վերայ:

Ճեռ տուից յառջիւ հէօլ բռնեց.

Որ հէօլ բռնեյ խալցըցուց՝

Թայեց զօշունի մէջ,

Հարիր մարդ սպանեց, երկու խարիր էլ եարալամիշ<sup>4)</sup> էրաց:

Զինք թողեց փախաւ էկաւ տուն:

Մսրամելքին էլ,—յանք իրկւան խաղ էրին—

<sup>1)</sup> Փահկան: <sup>2)</sup> Սազ ածէք: <sup>3)</sup> Զդատապարտէք: <sup>4)</sup> Վիրաւորեց,

Յըրկուն էրկու սըհաթ Դիմին<sup>1)</sup> ։ Եղաւ տուն փայտաստ էրաւ<sup>2)</sup> էկաւ տուն ։ Եկաւ տեսաւ օ Դաւիթ Էնկի ժուղար տակ էրաւ նիդր իւ ։ Էնեղան լար յարձըկից ։ Պիրեց Դաւթի բէօղազ<sup>3)</sup> խեղէկը ։ Մէր դռնէն էկաւ, էսաց. «Մեղիս, ինչ կէնիսա» ։ Ասաց. «Դաւիթ պիտի խեղդեմ, Խարիր մարդ ընծի սպանիր իւ ։ Ասաց. «Մեղիք, թէ տէ Դաւթին պէն ասիս» ։ Ին ծըծը կաթ քէ վերաց խարամ էլնի ։ Ճամպինի թու էրթաց իրա խօր էրկիր, Էլնը գունարած, ըլնը նախըրի ։ Իրան կէօխ պախի» ։ — Ասաց. «Զինի, պըտի սպանեմ» ։ Հասուածասէր մարդ կար, Էկան ինչան օրթալըդ ։ Զթողըն օր լապանէր ։ Ասաց. «Պիրէ, մէ ասաց<sup>4)</sup> կըրակ դրէք, մէկ օսկի դրէք, Դաւիթ կանչէք թող ից թէ որ կրակ վերցուց՝ էրեխաց ի, թէ որ օսկի վերցուց՝ կ'սպանեմ» ։ Կանչին, Դաւիթն էկաւ, ասին. Դաւիթ, էս էրկու քասից վոր մէկ քիւրտ կուզի՝ վէ կալ քեղի խամար» ։ Դաւիթ ձեռ տարաւ դէրաց օսկուն ։ Հրեշտակնիր Դաւթի ձեռ բռնին, տարան կրակի վերաց. Զեռ էրուաւ որ մատ պիտ տէր լեզուն՝ կրակ էկաւ առեց լեզուն, լեզուն էրուաւ, անուն դրին թըշտոր Դաւիթ ։

## Գ.

Ասաց. Որ էցկուն<sup>5)</sup> ի, ճամպինէք թըղ էրթաց ուր խօր էրկիր ։ Պիրեց Բ-թմանայէքնէն, ճարապախար-Քամին դրեց Դաւթի խետ, Էսաց. «Տարէք Բ-թմանայ կարմնջի վերէն մորթէք, մէկ բէ-թիկաց էրէն պիրէ», իս խըմիմ, իմ սիրտ խովանաց» ։ ԶԴաւիթ վերցին չնցին ։ Խինստ օր, վեց օր ճամխաց<sup>6)</sup> չնցին, մէկ օր չասին «Դաւիթ, դուն անօթի ես, ան<sup>7)</sup> ծարաւ ես», Դաւիթն էլ իրան քէֆի խետ կէր-

1) Երկու ժամուայ չափ; 2) Արձակեց, ազատութիւն տուաւ;

3) Կոկորդ; 4) Աման; 5) Ալդակէս; 6) Ճանապարհ; 7) կամ:

թէր: Կնոցան Բաժմանայ կարմնջի մօտ կայնան, Դաւթին կանչին.

«Դաւկիթ, Դաւկիթ, շուտ արի էրթանք»:

Դաւկիթ ինց խասաւ. ասաց. «Ճօ լըրըշմալքեր<sup>1)</sup>», էսա խինք օր կայ, վեց օր կայ մենք ճամբախ կու հնաք, տե- մէկ օր չասիք Դաւկիթ անօթիք ես, ան ծարաւ ես. էդ կարմնջի վերայ կայնիր էւ, ընչի չէս. էրթայ: Ասաց. «Դաւկիթ ժու խօր երկրէն մօտացիր ենք, մուշտուկուղ տանք Ձէնէօվ-Ցէօվանին, մէ պան տայ մուշտուկուղ»:

Մէկըն յիտ մնաց, մէկն ընտաւ Դաւթի յառեց: Կնոցին կարմնջի օրթալլդ<sup>2)</sup>:

Մէկ էն եանէն, մէկ էն եանէն դարձան՝ Դաւկիթ դնին կարմունջի վերայ մորթին: Դաւկիթն էլ Ասու անուն տուից, մէկ մեռ զարկ էնու եախէն, մէկ էնոր, պիրից դրից մէ մէկու վերայ:

Էսայ. «Դաւկիթ, տե- քետ Ասուած, անի օր քէօ խէր սաղ էր՝ մենք քէօ ֆէրըգ-փահլւանքտիրն ինք, օր քէօ խէր մեռաւ՝ ինոցինք Մսրամելքին կուլլուղ էրինք<sup>3)</sup>). Հիմի օր Ասուած էդ շնորհք տիփ քեղի, մենք կուլլուղ կէնինք, էլ յենք էրթայ Մելքին կուլլուղ էնի»: Թողից, կան ինոցին Սասնայ ողքին մօտացան: Մէկըն մուշտուկուղ տարաւ Ձէնէօվ-Ցէօվանին, ասաց. «Մուշտուկուղ տու, Դաւկիթն էկաւ»: Ասաց. «Եկաւ՝ բարով էկաւ», մէկ ողեին լիրայ մուշտուկուղ տուից: ասաց՝ Դաւկիթ էնինք ուշարած: աղջի էլեր տանի պախի: Ձէնէօվ-Ցէօվանն էլ մէ պողվոտէ սոլ կարել տուից Դաւթի խամար: Դաւկիթ էլերն առից ինց Թօլայ<sup>4)</sup> տուշտ: Դաւկիթ միտք էրաւ, էսայ. «Քանըմ, էդունց հաւս քիչ կընը, օր մէ կօխ պախսենք: Մէ զալամի<sup>5)</sup> ճառից ոշշից, առից իրան ձեռւ ինքաւ էդ սարի, էդ անդակի լը-պըստրակտիր<sup>6)</sup> բիրատի ժողվից պիրից: Պիրից տուշտը լի՛ էրաւ Պողվոտէ սոլեր կտրտվան: Խրօխսպէր ճաշին խաց պիրից Դաւթի խամար. տեսաւ օր սոլեր կտրտվիր ի, ասաց. «Դաւկիթ, զլիսուդ մեռնիմ, օրէ մէկ սոլ կարել տամ՝ քէօ հաւս էնկադայ<sup>7)</sup>» յի խանի, էլ մեր օգուտն ինչ տ'ըլնի»:

Ասաց. «Խրօխսպէր, էդ սիւ ուկիր Ասուած իրան պէրնով օրհնի, ամա էդ սրտակ, բօղ ուկիր՝ Ասուած էնոնց անիծի, ասաց. Խրօխսպէր, մէ ուկ մտիրի որի տակ. իզին<sup>8)</sup> կտան օր սպանիմ»:

Խրօխսպէր իշկեց, ըլլապստրակ էր որի տակ. իրա լեզուն խանիր էր ըլլապստրակ, ասաց. «Դաւկիթ, քեւ զըլիսուն զուրբան էլնիմ, էնու զարկ սպանի»:

<sup>1)</sup> հայնոյանք է: <sup>2)</sup> Մէջ տեղը. <sup>3)</sup> Ճառայեցինք:

\*<sup>4)</sup> Թօլայ դաշտ—անշուշտ նոյն Լուսայ կամ Լիւռայ դաշտն է, որ պատահում է միւս վարիանտներում:

<sup>5)</sup> Բարդի. <sup>6)</sup> Նապաստակներ. <sup>7)</sup> այնքան. <sup>8)</sup> սև. <sup>9)</sup> իրաւունք:

Փէտ ըմ զարկից, ըլլպաստրակ էրկու կտոր էլաւ, մէկ կտորը դըքայ արևելք ինց, մէկ գըքայ արև մուտք:

Զէնէովլ—Յէօվանն էկաւ տուն: Էկաւ տուն, էսաց. «Բօշ ի՝»), Դաւիթ ու ըլլպաստրակ մէ մէկից չի կարաց ճէկը, էնինս՝ նախրչի»:

Առաւտուն թողին նախիր տարաւ Թօլայ տոշտ, էլի միտք էրաւ, էսաց.— Քանի՞ն, էդ նոխրի հուս ինչ զադար տ' իշ, օր մենք ուտենք կտաւ-վարուենք»: Մէ զողմի առեց իրան ձեռ. ինչաւ սարեր, տնդակբեր ապան մէկ եանից պիրից, զավլան մէկ եանից պիրից, առօծ մէկ եանից պիրից, շէր մէկ եանից պիրից, պըլլնդ<sup>2)</sup>) մէկ եանից պիրից, գէլ մէկ եանից պիրից, արջ մէկ եանից պիրից. ամենաց ջեւ-ջոնաւար ժողվից տոշտը լիք էրաւ:

Խրօսապէր ճաշկն խաց տարաւ. ինց էլաւ գէօղըկի կէօխս, իրիշկեց Թօլայ տոշտ, Դաւիթ էնքամ ջնաւար ի ժողվի՝ օր Տէր փրկի, Յէ-նօվ-Յէօվան վախսեցաւ, կանչից Դաւիթին, ասաց. «Դաւիթ, Դաւիթ. Խրօսապէր մեռնի քեզի. Տերացիր եմ, չեմ կարաց կաց, արի քեւ խաց տար»: Ասաց. ճշմարիտ, խրօսապէրս վախսացաւ. էկաւ իրան խաց տարաւ. Դաւիթ: Յէնէօվ-Յէօվան լիտ դարձաւ էկաւ տուն. տղքի մէջ կանչիլ տվից, ասաց, «Ճի<sup>3)</sup> դռնիր փակէք, ամեն դրան ՚իտիւ մէ ջուկատ դերան ուշէք. Դաւիթ էնքամ ջանաւար ի ժողվի, օր էկաւ տղքի մէջ՝ մէրն էլ, տղէն էլ ա՛ռւտին, ներին դրնիր շինին:

Դաւիթին էն օր, հալայ ճաշ էր, նախիր պիրից, պիրից լցրեց տղքի մէջ, կանչեց էսաց, «Ցէրք, վեր էլէք, վեր էլէք. Վոր մէկին օր մալ չունի, իրան խամար մալ պանի. Վոր մէկին օր տաս ի, քսան տանի.

Վոր մէկին օր քսան ի, քռուուն տանի:

Մէկ մարդ տեղ չիրաց, չէլաւ. Դաւիթին էլ խաթր մնաց, ասաց. «Խա-րամ, ինցէք, հալալ մնացէք». էն սարու ջանաւարքեր իզին տվից, ինցին, նուրէն հարւաս<sup>4)</sup> էլաւ իրան մալ պունից տարաւ տուն:

Յէնէօվ-Յէօվան աստց. «Բօշ ի, Դաւիթ չի կարաց նախըզութին էնի, մէկ չորս-խիննէ ջահէլ տղայ դնինք խետ, էրթայ տոշտի մէջ լեր<sup>5)</sup> սպանի:

Կնացին տոշտի մէջ, ինկան պառվու կուրկի մէջ. Պառաւն էլ խաց թիսից, էլաւ ինց կուրկի տեսնէր: Տեսաւ օր Դաւիթ տղէք առիր ընկիր կուրկի մէջ. խասաւ պառաւ.

Մէ իւմրուղ<sup>6)</sup> տվից Դաւիթի գլխու վերաց, ասաց. «Կրէօղ<sup>7)</sup> քեզի տա-նէր Թըլօր-Դաւիթ, տէ ոչ պարով քեւ մօրէն ծնվէր. քիւ խօր չունի ավ—դուշի տեղ, օր պառվի կուրկի մէջ ավ—դուշ կէնիս:

<sup>1)</sup> Դաւարկ բան է. <sup>2)</sup> Վագր.

<sup>3)</sup> Ցեր:

<sup>4)</sup> Խրաքանչւր մէկը. <sup>5)</sup> Լոր. <sup>6)</sup> Բուռնցը. <sup>7)</sup> Գրողը.

Ասաց. «Պատաւ, իմ խօր ավ-դուշի տեղ վար տեղն ի».

Ասաց. «Քի խօր ավ-դուշի տեղ ՞ուղարկի ի, որ քէօ խէր մեռիր ի, Մըս բամելիք ցիտ ի կտրի<sup>1)</sup>»:

Դափիթն էլ էլաւ գործաւ էկաւ տուն, ասաց. «Տղէրք, պատրաստ մնացէք, առաւտու էրթանք ՞ուզասար ավ-դուշ»:

Տղէրքն էլ պատրաստութիւն տեհան, առաւտուն ինցան ՞ուզասար ավ-դուշ: Ձէնէօվ—Ձէօվանն էլ խետ ինց.

Կնոցին. էնու խէր պատ էր քաշէր սարու չորս կողը. Սարու օշնար օ եկեր էր թափեր մէջ, էլ չէր կարցի տէս էլնը. Դունիր պացին, մտան ներս. հորբառ խսասաւ, իրան խսմար կ'սպանէր. Դաւիթի կանչից էսաց. «Ե՛, իզին չկայ օր մէկն էլ սպանէ՛. Եղ իմ խէրն տէսաղ էրի<sup>2)</sup> կը բրախիմ<sup>3)</sup> էրթան սար. խօշախ է՝ ինցէ՛ս սար սպանէ՛»:

Քրախից ինցան սար:

Ով, ինչ կօչախ էր, ինց իրան ավ-դուշ էրաց, ովինչ թամբոլ էր, ցիտ մնաց. ցիտ դարձան էկան մնացին ՞ուզասար. Միս էփին կերան. Քնելու ժամանակ Դաւիթի չուխու փէշ Ձէնէօվ-Ձէօվան դրից զլիստակ, ժնաւ, ասաց. «Դաւիթ էրէխաց ի, չվախնաց ըլնի մէկ եան էրթայ». Մնաց. կէս քիշերպան ի. Դաւիթն էլ օխտ տարեկան ի. քին չը տանի. Բրիշկեց սար մէշի<sup>4)</sup> մէջ մէ կրակ մ' կը վարուէր: Ըկա տէրթէր դըրաց կրակին, տեհնամ ինչ մարդիկ են ավ-դուշ կենեն. Վարզիք էլաւ, տեսաւ օր չուխու փէշ խրօխպէր դրիր էր վերաց դընիր էր, ասաց. «Թի որ վէ խանեմ<sup>5)</sup> տասի Դաւիթ վախեցաւ. թէ որ չխանեմ, չուխու փէշ էնու զլիսու տակն ի. Զախուն<sup>6)</sup> թալեց, էնու չուխու փէշ կտրից»:

Էլաւ ինց դըրաց էն կրակին, կնոց էնտեղ տեսաւ, օր վնչ Մորուլոյ ի. մարմար քոր պացիքր ի, լիս կամար վերէն կանգնիր ի, վանքի խիմ<sup>7)</sup> պացիքր ի. Իրեւ անգամ զլիս համբուրից, դարձաւ էկաւ, էկաւ, հոլաց խրօխպէր ժնած էր. ասաց.

«Խրօխպէր վիր էլի,

«Խէր չունեմ, արա խէրութին,

«Մէր չունեմ, արա մէրութին.

«Օրհնեալ-բարերար Աստուած,

«Խնամքն է շատ Աստըծուն»<sup>8)</sup>.

Խրօխպէր վիր էլաւ, ասաց. «Մոռա Դաւիթ, էլ ինչ էրիր»:  
Հասց.

«Խրօխպէր, Օրհնեալ բարերար Աստուած,

Խնամքն է շատ Աստըծուն,

<sup>1)</sup> Խէր է. <sup>2)</sup> Բանտարկել. <sup>3)</sup> Լզատ կը թողնեմ.

<sup>4)</sup> Անտառ. <sup>5)</sup> Զարթեցնեմ. <sup>6)</sup> Դանակ. <sup>7)</sup> Կիմքը. <sup>8)</sup> Երդ է.

Գնացիր ի վանքն Մարութացի,  
Մարմար քար բացվիր ի,  
Լյուս կամար վերէն կանգնիր ի,  
Երեք անգամ խամբուրիր իմ,  
Վանքի խիմ պացիր իմ:  
 Հիմ, էսաց, էսօր ուրբաթ ի, Էնքան Փալայ կողիմ, Էնքան ուստաչ  
կուղիմ, էս օր ուրբաթ ի, ձեռ ձգենք վանք շինենք.—  
Օրբաթ օր ձեռ ձգենք շինելու.  
Ճ-բաթ օր կէօխ պիրենք վ-նք, գ-նզեր կախենք,  
Մէ պատարագ մէջ էնենք, օրէնք առնենք,  
Կրթանք մէջ տեղ նստենք:  
 Էնքան Փ-հալայ-ուստաչ պիրեց,  
Օրբաթ օր ձեռ քցին վանք շինելու,  
Ճ-բաթ օր կէօխ էկաւ, գ-նզեր կախին,  
Կէրակի օր քուսուն վարդապետ դրից վ-նքի մէջ,  
Ք-ուսուն էլ տէրտէր դրից վ-նքի մէջ,  
Ք-ուսուն էլ տիրացու դրից վ-նքի մէջ,  
Պատարագ մատուցին. իրանց օրէնքն առին.  
Բաժմանայ-հիւղէն, ճարպախար-Քամին —  
— Օրէն մէկ տիկ մեղր, մէ՛ կարագ  
Էն էրկօս խօրագն էր.—  
Դրին վանքի պախեցող:  
Թողին չսացին էրանց տուն:

## Թ.

Օխտ տարի կէր՝ Մարամելիք Սասնայ խարջ կառնէր.

(Եկան էրանց տուն նստան):

Խարար չնոց Մելի խամար, ասաց.

«Դաւիթ ելիր ի կնացիր Ծովասար ավ-դուշի.

Վ-նք Մարութացի շիներ ի,

Ք-ուսուն վարդապետ դրիրի մէջ,

Ք-ուսուն տէրտէր դրիրի մէջ,

Ք-ուսուն տիրացու դրիրի մէջ,

Բաժմանայ-հիւղէն, ճարպախար Քամին

Դրիր ի վ-նի պախեցող:

Մելիքն ասաց. «Վ-նիր Մէկըինն ի,

Մինչ ճամխենք մեր խարջն առնենք»:

Տաս խատ եասավուզ ճամխեց,

Եկան Սասուն օր խարջ տանին.

Սասնաց խարջն էլ ի՞նչ ի —  
 Քուսուն կուս-աղջիկ արմաղան,  
 Քուսուն կօլօտ կնիկ էլ՝ օր երկանք աղան.  
 Քուսուն էրկան կնիկ էլ՝ օր ուղտ բառնան.  
 Քուսուն բուլլիկ աճառ լծկան,  
 Քուսուն կօտ էլ ոսկի (Սասնաց խարջն ի),  
 ին եասավուլէր ինցին  
 Քուսուն աղջիկ ժողկին  
 Լցին մէկ տան մէջ,  
 Քուսուն կօլօտ կնիկ էլ  
 Լցին մէկ տան մէջ,  
 Քուսուն երկար կնիկ էլ՝  
 Լցին մէկ տան մէջ.  
 Պառվու աղջիկն էլ տարան:  
 Պառաւ խաց թխից, ինց դըբաց կուրկին.  
 Կնոց տեսաւ օր Դաւիթ, տղերք ինիծ ի կուրկի մէջ:  
 Պառաւ ինց մէ իւմրու Դաւիթին զարից,  
 Հասց. «Դաւիթ, տի ոչ-պարով քէ մօրէն ձնվէր,  
 Եկեր եւ ինկեր ես պառվու կուրկի մէջ,  
 Եկեր ես պառվու կուրեկ կքանդես:  
 Հասց. «Կնա, Մսրամելիք ճամիսիր ի  
 Իրան խարջ կ'տանի. Կոչալս մարդ ես՝  
 Կնոց մէ թըղնի օր զգխորշ տանի»:  
 Հասց. «Պառաւ, ընկի իմ առջև էրթանք:  
 Պառաւ ընկաւ Դաւիթի յառջիւ ինցին.  
 Դռնիր բիրադի շանց տվից,  
 Դաւիթ ասաց. «Մէրիր —քուրիր,  
 Եարէց՝<sup>1)</sup> ինցից ձեր տուն»:  
 Բրախից ինցին իրանց տուն.  
 Հասց. «Ես կերթամ ձեր չար կ'տանիմ»:  
 Կնոց աճառու տիւռն էլ պացից.  
 Ասաց. «Ասծու հէանեեր, ինցէք ձեր տիրոնց տիւռ»:  
 Պառաւն ընկաւ յառէց.  
 Կնոցին լսրդնի տիւռ.  
 Կնոց տեսաւ ին խատ եասավուլ  
 Խըզնի դռան վերաց կայնած ին,  
 Ինն էլ սպանից.  
 Մէկն էլ մտիր ի խիզինէն կ'չափի.

<sup>1)</sup> Արիք:

Զինք մտաւ խեղինէն, Էսաց. «Խրօխալէր, խրօխալէր \*), հոգոյն առաջ առաջ կօտ տու ընձի ես եղին-եղին '), չափիմ»: Կամաց զբայ առ հարածութ կօտ խրօխալօր ձեռնէն առից: Հայոց Անապ շնչ քիչ առաջ Ասայ. «Մէ՛ անզան քիւ խէր կանչիր էր, առաջար ուսով ուն առաջ Մէկն էլ տիւ. իմ փուր ՝ ին-ց»: Առաջար գրացնաւու ուն կեղոնց կօտ խրօխալօր ձեռնէն առից, ուն դրանու հայ զնցնուու ուն կօտ շունեց պերնիւ վերէն:

Օսկին կ'չափի կ'թափի գետին. Խարիս շուրանի առաջ ունան միշտով Եսասավուշ Դաւթի խետ կովաւ, առաջ շուր ուն մայ պարագան տան Ասաց. «Եղ հնց կ'չափիս: Առաջ մատն-դրանի առջ ունան Դաւթին էլ ինադ էրաւ. Առաջ կովաւ ուն առաջ ունան ունան մայ Ինադ էրաւ զկօտ զարկից պատ. Առաջ մայ ուն քիւ-ուն զարկից պատ. Որ զարկից պատ պատ շուշայ էր, ճղվաւ. Առաջ մայ ուն առաջ ուն Խոկինէն էկաւ թափաւ,

Օթախը լիւ էրաւ.

Ասաց. «Քօխալէր. էդ փուղը քիւ կէօխ ուտէր. Խոկինէն էդ մատուն էդ փող մեզի ունինս, Առաջար ունան զնցնուու ուն Մէ օր տեւ ընձի կէնես նախսրչի, առաջ ուրա մայ սիման միշտով Մէ օր լէօր ըսպանող: Առաջ մայ ունան իլլուն:

Ասաց. «Դաւիթ, զիլիդ մեռնիմ, Խոկինէն ուն անձի զնցնուու մայ էդ փող մեզի ունինք' էդ օրն էլ ունինք, Առաջ Տարին առասուն կօտ խորջ կ'տանք, առաջ ուն ունինք առաջ առաջ Դաւիթ պիրից էդ եասավուլի ականջքեր կտրից, առաջ առ առ Ետամներն էլ աշից, էրաւ պիտեռ \*), Առաջ ուն առաջ պարունակ Զարկից եասավուլի ճակատ:

Թուղթ կրրեց Դաւիթ, տվեց եասավուլին. Առաջ ուն առաջ պարունակ Ասաց. «Կ'տանես Մսրամելքի խամար, ի ճիռը բանուն մայ առ Թէ՛ Մսրամելքի, ես մէ կապէկ Քեզի խորջ չեմ ի տայ.

Կօչախ մարդ ես՝ էրի կոխւ անենս: »

### Ե.

Եասավուլ էլաւ թուղթ վէ կալից Առաջ ուն մատուն զնցնուու կինց դըրաչ Մըրար. Առաջ ուն մատուն զնցնուու Կրնց իշկաւ օր Մելիք ակուշկէն նստիր ի, Առաջ ուն մատուն միշտ այ Դի-բինն էլ առի իրան ձեռ. Առաջ ուն մատուն դիմայ ուն մատուն Ճեռուանց իրիշկեց Մելիք:

\* ) Բարձրաձայն գոռոռմ է: Առաջ ուն մատուն մայ է շնչ մնիս այլ է:

<sup>1)</sup> Արագ-արագ. <sup>2)</sup> Փորը. <sup>3)</sup> Բնեռ, մեխ:

Սսաց. «Վալլահ, իմ եասապուլ Ծրբայօն» այս է ամենու ուսու ունի ծրծաղում ա, խարջ կ'պերի»:

Սսաց. «ին խատ սպանիր ի, ու պըսաւ ուն ան առանձ ԱՅ բառ ԽԵ ականջքեր կտրիրի ի,

ԽԵ ատամքեր քաշի արիր ի մեխ, ու ու անուն ոյսունու առ ունը Զարկիր ի ճակտիս»:

Թուղթ տուեց ձեռ, թուղթ կարդաց, ստում ոքուն է վասական Չատ անպատիւ բռն մէջ կրած էր.

Կանչից իրա վազիրերուն, ասաց.

«Ի՞նչ կասէք, կմբւ էրթանէք, թը չ'երթանք»: ուն բառ և մ օքան ԿԱ-ՀԵ-ՇԵ կայ, էնու մէկ ձի ունի, վեց ոտանի իո ունի առ բառ Կուգրադին ՄԵլքին էսաց.

«ՄԵլքիք, ինչ տաս ընձի էրթամ քէօ խարջն էլ պիրիս,

Սասուն էլ թալանիմ պիրիս, առ այս ու առ առանձիւ բառ Կուս աղջըլներ պիրիս արմաղան,

Ցերկէն կնանիք պիրիս ուղտ պառնան, ուն ուն մունք մունք ուն առ ԱՅ Բուղլիկ անառ պիրենս լծան.

Սասուն բիրազը պիրենս առ-թալան»:

Սսաց. «Կուգրադին, օ տէ ըցկուն կօչալս իս,

ԽԵ թագաւորութընը կէս կ'տամ քեզի»:

Սսաց. «Տո ընձի իրիք խարիր ջուկովի ձխաւոր իրիք խարիր ձխաւոր վիկալից էկաւ կիսու ճամխէն մէ արջ տեհաւ սպանից էնու ականջ-

քեր կտրից, առից իրան խետ, էկաւ էլ Դաւթի ալխուն էրկի-դ էրաւ չմտաւ ուղար, կնաց դըրայ վ-ն-Մարութացին, ինաց ճարպախսար-Քամին, Բաթմանաց ჩիւդէն վ-ն-ի պախեցողն ին Գէ-մշու նման պոռացին, էկան Կուգրադընը դէմ.

Կուգրադին խանեց արջու ականջքեր շանց տիփո էտոնց, ասաց. «Եղոնք Դաւթի ականջքիրն են, ուն խամար կուր կէնէք, Դաւկիթ սպանիր իմ Եղ էրկուս փախան ինացին մէ քարի տակ Կուգրադին էլ մտաւ վ-ն-ի մէջ»:

Սպանից քուասուն վարդապետ,

Սպանից քուասուն տէրտէր,

Քուասուն պակաս մէ՝ տիրացու,

Էն մէկ տիրացու մտաւ խըսըրը մէջ,

Կուգրադին վ-ն-քը լուսկից առից ինաց.

Տիրացուն էկաւ ժամի շապիկ

Տիփո արնի մէջ, էկաւ դըրայ Սասուն:

Եկաւ տեսաւ օր Դաւիթ-

Նստիրի կերուխում կ'էնի:

Գինը լսմիր ի, քէֆ լսասիր ի,

Մէ կազ<sup>1)</sup> էլ էրի խորոված

Դրէ փլաւի վերաց:

Տիրացուն էսաց. «Ճատ ըմ պարին մեր պարոնին,

Նստիր ի կ'լսմի նռան գինին.

Եկին վնս Մարութացի,

Սպանեցին քուսուն վարդապետ,

Սպանեցին քուսուն տէրտէր,

Եռեսուն ին տիրացու.

Վնս թալանեցին չնոցին»:

Դաւիթ,—քէֆ լսասիր էր—չլսասիցաւ,

Դաւիթն էսաց «Տընտիս, տընտիս,

Խոնւնին ի պակաս, ձէթն ի պակաս,

Տրէւ տիրացուն առնի էթաց».

Մէկն էլ տիրացուն էսաց.

«Ճատ ըմ պարին մեր պարոնին,

Նստիր կ'լսմի նռան գինին.

Եկաւ վնս Մարութացին,

Սպանին քուսուն վարդապետ,

Սպանին քուսուն տէրտէր,

Եռեսուն ին տիրացու.

Վնս թալանեցին չնոցին.

—Եկի չլսասիցաւ, էսաց.

«Տընտիս, տընտիս, խոնւնին ի պակաս, ձէթն ի պակաս.

Տրէւ թըղ տիրացուն առնի էթաց»:

Ժամի շապիկ թալից Դաւիթի առջիւ.

Որ Դաւիթի աչք առից շապիկն՝

Քէֆ թողից, էսաց.

«Տիրացու, էդ ինչ պան ի».

Էրաց. «Եկան վնս Մարութացին,

Սպանին քուսուն վարդապետ,

Սպանին քուսուն տէրտէր,

Սպանին եռեսուն ին տիրացու»:

Քէֆ զլսուց թափաւ।

Տիրացուն նստաւ լսաց ուտելու:

Դաւիթն էսաց.

«Հեռնիկ, տիւ կուտուր մնէր,  
 «Հզարկէր իմ վարդըպետքերուն սպանէր,  
 «Ոսկի գուազան կառնին իրանց ձեռ.  
 «Քարոզ կըտին ժողովուրդին,  
 «Հեռնիկ, տիւ կուտուր մնէր,  
 «Հզարկէր իմ տէրտէրքերուն սպանէր,  
 «Ոսկի սըկին <sup>1)</sup> կառնին իրանց ձեռ  
 «Օրէնք կը տին ժողովուրդին,  
 «Հեռնիկ, տիւ կուտուր մնէր,  
 «Հզարկէր իմ տիրացու չսպանէր,  
 «Ոսկի բերկառ կառնէր իրանց ձեռ  
 «Խունկ կ'ծիւէր իմ ժողովուրդին, <sup>2)</sup>  
 Դաւիթն կասիր. «Տիրաց. էն մարդիկ  
 Ճնշտ ի գնացած, թէ յանագան։  
 Ըսաց. «պարուն Դաւիթ,  
 Էնոնք դըբաց ուրանց երկիր կնացին,  
 Դս էլ դըբաց էս թեւսն իմ եկեր։

## Զ.

Դաւիթն էր. ըլաւ մէ դալամի ծառ քաշից, Սոկոց իր ձեռ, առեց կընաց.  
 Կնաց մէկ ձուրի մէջ,  
 Առանձը՝ կառաւ կասին անուն.  
 Տեղ չ'կաց օր փախին,  
 Կնտեղ Դաւիթ խասաւ էդերունց.  
 Որ խասաւ՝ աջով զարկից  
 Զախ թիվի վերաց զարկից.  
 Ղօշուն սպանից. մնաց Կուզբաղին.  
 Էնու ձի Շա սրակ էր,—  
 Թռաւ ճեղ քարին, յանցաւ ինաց.  
 Կընաց խասաւ Մըսրու  
 Ըխչկներ, խարսներ էկեր ին յաղբուր ջրի.  
 Կուզբաղին փախչելով կերթաց.  
 Ըսին. «Կուզբաղին ժամաց-բերան,  
 Ցիւստ կու էս լերան լերան.  
 Բերանդ պաց ի տնց կէսէնը <sup>3)</sup> շան,  
 Ջեր կ'թափի տնց չօլի թան,

1) Սկին. 2) Երգ է. 3) Բերանը.

Ճանճիր մէջ կերթան կուէն:

Տէ կէրթէր Սասուն,

Կուս աղջկտէր կ'պերէր արմաղան.

Կօլօտ կնանիք՝ էրկանք աղան.

Էրկէն կնանիք է՛լ ուղտ պոռնան.

Բուղլիկ-աճառ կ'պերէր լծան,

Սասուն բիրաղի կ'պերէր առ-թալան.

Բա միր մարդիր վ՞ր տեղն ին,

Ոնչ կան, ոնչ կերևան.

Սասաց.

Միվլըն կապէք, ալսյիկներ, խարսներ,

Մարդ է՛ն էրկիր՝ կազանական,

Էնունց նեսիր գերանական,

Վ-ը տեղ կ'զանին՝ ցիտ կ'պանան,

Ք-նց մէկ պատուխան.

Զի մարդիքներ գէօ տ-մէր կը տըշան.

Գ-րնան սելաւ օր կըլնի՝

Էնու ճուճ-պղոր պիրի

Ձե խամար էջի եղու չորթան»

Կընաց մտաւ իրան տուն,

Խոբ-ը տարան Մելքին.

Սասաց. «Կուղբաղին էկիր ի իրան տուն, զինք պահիր ի»:

Ճամփից, Կուղբաղին էկաւ.

Սասաց. «Կուղբաղին տասպերան

Ցի-ստ կու էս լերան-լերան,

Պերանդ պ-ց ի տ-նց էշիսէնը շան,

Ճանճիր մէջ կէրթան կու իան,

Քէր կ'թափի քանց չոլի թան.

Տէ ինացիր Սասուն.

Կուս-աղջկներ պիրէր՝ արմաղան,

Կօլօտ կնանիք պիրէր՝ էրկանք աղան.

Ցերկէն կնանիք՝ ուղտ պառնան,

Սասուն բիրաղի պիրէր առ-թալան.

Բա մէ մարդիր վ՞ր տեղն ին,

Ոնչ կան, ոչ կերևան:

Սասաց. «պարուն Մելքի.

Մարդ է՛կ ընտեղ կազանական,

Էնու նիտիր գերանական,

Վ-ը տեղ կ'զարկէր՝ ցիտ կ'պանէր

Քանց մէ պատուխան.

Ձի սարդիքներ գէօ ոք-ձէր կը տըռան.

Գորնան սելաւ օր կը նի՞'

Էնու ճուճ ու պլոր պիրի

Ձի խամար եղ ու չորթան։

մահապահ ու պահանձ ու պահանձ

առանձ ու պահանձ ու պահանձ ու պահանձ

կ.

Կ'կանչի, իրան իշխանքտիր կ'ժողվի.

Իրան արնէն մէ թուղթ կ'ըրի կօրօղկի արևելք.

Մէկ թուղթ էլ կ'ըրի կօրօղկի արևմուտք.

Մէկ թուղթ էլ իրան արնէն

կ'ըրի, կօրօղկի հիւսիսային.

Մէ թուղթ կ'ըրի, կօրօղկի հարաւային,

Մէ թուղթ էլ կ'ըրի, չորս կողմ աշխըրքին շուռ կածի.

Ասաց.

«Տը տամ յոռջիւս խինն խոզար խամար <sup>1)</sup> նոր բիղտար <sup>2)</sup>,»

«Տը տամ յոռջիւս խինն խոզար խամար նորափեսաց,

«Տը տամ յոռջիւս խինն խոզար խամար թիվս-մօրուս,

«Տը տամ յոռջիւս խինն խոզար խամար խառ-մօրուք,

«Տը տամ յոռջիւս խինն խոզար խամար սըլտակ-մօրուս,

«Տը տամ յոռջիւս խինն խոզար խամար դբհ-օլիք <sup>3)</sup>,

«Տը տամ յոռջիւս խինն խոզար խամար զուռնըչի» <sup>4)</sup>.

Կնքամ զօշուն ժողվեց.

Ժողվան չադրքիր զարկին,

Որ պըտի առաւօտ կոիւ էրթան,

Էն գիշեր Մելի մէր էրազ տեհաւ

Որ լիւս բացվաւ՝ էլաւ

Մելքի խամար կը պատմի:

Ասաց. «Մելքի, մի էրթայ էն կօչախի վերայ.

Մէկ էրազ իմ տիհիր.

Կնքազմի զահահուրիմ իմ.

Գիշեր էրազի մէջ որ տիհայ՝

Սասընայ աստղաց լիւս-պայծառ էր,

Մըսրայ աստղաց մութ-խաւար էր.

Մի էրթայ էն կօչախի վերայ.

Գիշեր էրազի մէջ տեհաւ՝

Մըրաց ձին փախս էլաւ,

<sup>1)</sup> համար; <sup>2)</sup> նոր ծլած մօրուսով;

<sup>3)</sup> թմբուկ ածող; <sup>4)</sup> Երգ է.

Սասնայ ձին էլ յետև խաղ էլաւ,  
Մի էրթաց էն կօչախսի վերաց:

Մելիք էսաց.

«Թըղ շուտ ընձի խաբար էնէր,

Ք-նի էդ զօշուն չէր ժողվիր

Որ էդ մարդիկ էկան՝ պըտի էրթամ կռիւ.

մայութառ շուտ վրա գոյն ա՞ն

միջամատ երաց պատ զոյն ա՞ն

միջամատ այ մարդու միւս զոյն ա՞ն

միջամատ մասունք պատ զոյն ա՞ն

միջամատ մասունք պատ զոյն ա՞ն

միջամատ յա-էր զոյն զոյն ա՞ն

միջամատ յա-էր զոյն զոյն ա՞ն

## Է.

Մելիք հնաց Թօլայ տոշտ.

Զադըրքիր զարկից.

Խաբար ճամլից Դաւթի խամար,

Թը՝ թըղ Դաւթի հու կռիւ էնինք.

Խաբար տարան Դաւթին,

Դաւթին էլ իրան թայդաշ<sup>1)</sup> տղերք առիր էր

Կնոցիր էր պառկու կռիկի մէջ:

Պառաւ խաց թխից,

Եկաւ կընաց կռիկի տեսութին.

Տեսաւ օր Դաւթի զտղերք

Օռիր ընկիր կռւրկի մէջ:

Մէկ իւմրուղ տվից Դաւթի դլսէւ վերաց.

Ըսաց. «Գրէօղը քեզի տանէր,

Սասնայ շաւլման:

Տէ փուչ պարով քէն մօրէն ծնվէր.

Էն օր հնացիր Ծովասար ավ-դուշ

Մելիքի եսավունիր սպանիր.

Ըսաց. Մելիք էկի զօշում կապի Թօլայ տոշտ.

Կռիւ կռւզի քեզանից:

Ըսաց. «Պառաւ, ջահնամ թէ կ'ուզ

Զզիքի բիրադի եխսիր կ'տանի,

Մէկ չախու էլ չունիմ,

Որ մէկ մարդ դնիմ գետին մորթիմ.

Հնչնվ էրթամ կռիւ էնիմ.»

Ըսաց.

«Կրէօղ քեզի տանի, Թլվատ-Դաւթիթ,

Պառկու խնուց<sup>1)</sup> խեծի հնա կռիւ էրա \*).

Բա տիւ չըս գինսայ

Քիւ խօր ունի Քիւրկի քալալին,

միջամատ առ զոյն պատ ա՞ն

միջամատ առ զոյն պատ ա՞ն

մաս նոցին առ զոյն պատ ա՞ն

1) Կասակակից.

1) Խնոցին \*) Ծաղրում է Դաւթին.

Քեւ խօր ունի խաչ-պատրազին,  
 Քեւ խօր ունի շապիկ զրելսին,  
 Քեւ խօր ունի ամարն ի մէջքին,  
 Քեւ խօր ունի կապէն աթըբին.  
 Քեւ խօր ունի խօդէն ի կրվին,  
 Քեւ խօր ունի թուրլն կէծակին,  
 Քեւ խօր ունի գլորզ ֆէրզին:  
 Կըն շհ-ըի իշխանքտիր ժողվի  
 Մէկ որող տու խմին.  
 Խրօխպօրէ մօտէն  
 Քեւ խօր սիլլ-հն ուզի.  
 Կը տայ՝ խաթրով կ'տայ.  
 Թէ որ յը տիփց՝ զօրով առ մօտէն, քէօ խօր մալն ի՛,  
 կաւ ին-ց իշխանքտիր կանչից.  
 Մէկ արադ տվից իշխանքտիր խման.  
 Խրօխպօրն էսաց. «Խրօխպէր,  
 Ղօշումն էկի Թօլայ տոշտ նստիր ի,  
 Մսրայ մելիքն ի, կուի կուզի.  
 Խմ խօր սիլլահ տուր  
 Օր եւ էրթամ կոիւ։  
 Խրօխպէր կասի.  
 «Էնու պերան կոտրի՝ որ քեզի ասիր ի.  
 Կընա, քուսուն խատ ձի  
 Գումի մէջ կապիր իմ.  
 Վ-որ մէկը քէֆդ կուզի՝ վէ կալ ին-ց։  
 Կն-ց գումի տիւ-ո բացից, մտաւ ներս.  
 Վ-որ մէկը որ ամկի վերայ ձեռ տվից՝  
 Էնու փուր առից գետին.  
 Կընաց, մէ կապուտ քուակ  
 Ջէրէի կօխ կապիր ին.  
 Որ ձեռ տվից ամկի վերայ՝  
 Ուս զարկից պատ, կրակ մօտէն ին-ց,  
 Կապուտ քէ-ուակ տիւս խանեց,  
 Մէկ դեղին մշիթայ տվից պառվուն.  
 Ջէր տաքացըցուց,  
 Լզքիւռկիկ Բալալուն լրտոց,  
 Ասու հրամանքիւ ձիուն լեզու էկաւ,  
 Ձին Դաւթի խետ զրուցեց, ասաց.  
 «Ես օխստ տարի կայ՝ քիւ խէր մելիր ի,  
 Առանց զարի իմ մնացիր,

**Զեմ կարայ օր քեզի կոփւ տանիմ,**

**Ասաց. «Քըլլսէդ մեռնիմ,**

**Ասուած արեգի ի տվիր ի,**

**Քեզի տէր կայնիր ի,**

**Ելաւ գորի տըլուց ձիուն,**

**Վնաց խօրօնապօր կուշտ, ասաց.**

**«Խորօնապէր, իմ խօր շոր, թուր կուզիմ»**

**Ասաց. «Հնա, վար տեղն օր ձին պիրեր իս,**

**Մէ քար կաչ, էն քար շոճի,**

**Քիւ խօր շուրիր - թուր էնտեղն ի»,**

**Դոււիթ ինաց քար շոճից,**

**Իրա խօր շուրիր խանից խագաւ,**

**Որ խագաւ շապիկ օխտ փաթ էկա.**

**Քամար օր կապից, օխտ փաթ էկաւ,**

**Թուր օր կապից՝ թրի կէսն մնաց գետինք.**

**Զեռ թալից գէրզ անջախ ձիու քամկից կախ տվից,**

**Կէաւ ինաց տուն.**

**Մէկ թուղթ Մելիքի խամար ճամփից.**

**Ասաց. «Իրեք օր մօհըլ իտաս**

**Իրեք օր որ լրմանայ,**

**Կէմ քէ խետ կ'կովիմ»:**

**Իրեք օր մօհըլ տըլեց Դաւթին.**

**Դաւթի պատարագ մատուցել տվից,**

**Իրան օրէնն առից**

**Խշանքտերաց խալալութին ուզից,**

**Կէաւ իրան ձին սարքից**

**Իրան շորիր խագաւ,**

**Խայ-պատրագին աջ թեկի վերայ կապից.**

**Խօրօնապէրն էսաց. «Տըլէրք,**

**Կընացէք վարաւուրդ էրէք,**

**Էնու խէր որ ձիու զոլան<sup>1)</sup> կ'պնդէք՝**

**Ձիու էրկու ոստ կ'վերցէք.**

**Թէ որ էն էլ վըրցուց՝**

**Բոլիի մէ պան բաշարի.**

**Թէ որ չըրցուց՝ կ'երթայ կ'սպանվի:**

**Կնացին վարաւուրդ էրին.**

**Որ ձիու զոլան պնդից,**

**Ճիու չորս ոտն էլ գետնուց վէ կալից,**

1) Փորկապ.

Խանից իրա չէօքիրը <sup>3)</sup>:

Մուշտուլուղ տարան խրօսագոր:

Էկաւ ձին խենաւ Դաւիթ:

Ասաց.

«Ափսուս խազար ափսուս,

«Կնաց Քյուլիկ-Քալալէն Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց թուր-կէծակին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս

«Կնաց գէօրմ-Քէրըզին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց խաչ-պատրապին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց շապիկ-զրեխին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց կապէն աթըրին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց խօտէն կըլլիխին Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց բւշա Դաւիթ Սասնայ տնէն:

«Ափսուս, խազար ափսուս,

«Կնաց թըռլան Դաւիթ Սասնայ տնէն: \*

Ասաց. «Խօրօխսպէր, բերանդ կոտրէր.

Ես պիտի քեզի սպանէ,

Եարաբ էդ մալ ընձանից,

Ճատ աւելի էր. օր տիւ

Ըւալ <sup>1)</sup> մալ կափսուեր, սօրաց <sup>2)</sup> ընձի,

Ասաց. «Դաւիթ, կըսիտ մեռնիմ, յորին քէն չա միքաղակա-լալ

Մերացիր իմ, խելս ցնդիր ի,

Խաթրդ չը մնայ:

Թ.

Դաւիթն էլաւ ձին խենաւ, էրթէր կուիւ.

Խրօխսպէրն ասաց. «Դաւիթ,

Կերթաս ճամիսի օրթալլ

Մէկ աղբէր կայ էնտեղ,

Քէօ ձին կ'կանգնի էնտեղ,

Շառը չէ մէ ու նու

Աթաշաց մար մէ մուշ

Խնդիր յանդի կապուլի ու հա

Ափս բարակարի մըքան

Յըքի մարը տիւ պի

<sup>1)</sup> Բարձրացրեց մինչև իւր ծնկները. Ի բանաժ է մաս առջ ամբ

<sup>2)</sup> Երգ է. զերջին տունը երկու անգամ են երգում.

<sup>3)</sup> Նախ. <sup>2)</sup> ապա. <sup>3)</sup> սիւն.

Քէօ ձիուն մէ՞ զօրի.  
 Ձիուց վէ էրի,  
 Էնտեղ մէկ նշխարք կեր,  
 Էն աղբրի վերայ տընի.  
 Ճնորհք Աստծուց կառնիս, կըլնիս, կէրթաս.  
 Մէ սուն ճամփը մէջ ընկած ին,  
 Մէ պօղվրտէ սուն.  
 Քէօ խէր օր կէրթէր՝ թուր կ'զարկէր.  
 Էն սուն օր կտրէր՝ կէրթէր.  
 Սուն օր չկտրէր՝ յետ կ'դառնէր.  
 Տէ էլ կնա, թուրը զարկ.  
 Թի որ կտրից՝ կնա.  
 Թի որ չկտրից՝ յետ դարձի,  
 Թող Մելիք ից, ինչ կ'տանի թըղ տանի  
 Թաւիթ մին քշից ինաց.  
 Ալրից վերայ կայնաւ.  
 Ձիուց վէ էկաւ.  
 Մէ նշխարք կերաւ, չեր խմաւ.  
 Աղբրի վերայ քնաւ.  
 Ճնորհքն Աստծուց առաւ.  
 Խարար էլաւ, տեսաւ որ  
 Ճնորհքն Աստծուց առիր ի.  
 Էնի էլաւ խօր չափին:  
 Հանք էն վախտ ամէն շուրն էլ օխտ փաթ էր.  
 Ամէն շուրն էլ մէկ փաթ էլաւ.  
 Էլաւ մին խեծաւ ինաց:  
 Կնաց, պողվրտէ սուն  
 Ճամփէ ինկած էր, տեհնաւ, ասաց.  
 «Ցիշեա, խէր 1) կենդանի,  
 Խաչ պատրազի վար իմ աջ թեկին.  
 Զարկին զթուր կէծակին,  
 Պողվրտէ սուն կտրիմ,  
 Խմ գէօհար անուն չափրից»:  
 Թուր զարկից, զուն կտրից,  
 Օրթալըսէն ընցաւ.  
 Էկի սեան կտոր մնաց կիսու վերայ,  
 Զինք լը լիմացաւ. զինք անիծից,

1) Կայր.

2) Կամար, Կաշի. 3) Յաղթել.

Նիսճ բարօվ մե ինչին նիսճաւ»

Ասաց. «Ձեռնիկ, տիւ կուտուր մնէր,

Զարկիր էդ սեան չ'կտրիր.

Իմ գէօհար անուն

Աշխրքի մէջ աւիրեցիր»:

Թե՞վ թէօլացաւ

Հարաւային բամին էկաւ

Զարկից սեան կեօխ շռձից,

Դաւիթ նոր խաբար էլաւ

Թը իրան թուր կտրէր էր,

Ասաց. «Ձեռնիկ, տիւ կանաչ մնէր,

Որ զարկըցիր էդ պողվլտէ սեան կտրեցիր,

Իմ գէօհար անուն չարեցիր»:

Ճին քշեց ինց Ռոլայ տ-շտ,

Կնց գէօդըկի կէօխ կանգնաւ,

Երիշկեց չատիրքերու.

Էրկնուց աստղերուն հեսաբ <sup>1)</sup> կայ,

Զադըքերուն չ'կայ.

Դաւիթ լաց էլաւ, ասաց.

«Իմ Ծատուած, ես ըլնիմ կատղած գէլ՝

Կնունք ըլնին գոռ,

Ես չեմ կարայ ալթ էնի <sup>2)</sup>.

Իմ տէր Ծատուած,

Կնունք ըլնին գրզած քամբակ,

Ես ըլնիմ կրակ՝

Ես չեմ կարայ գէնունք վոռի»:

Ծոու հրամանքիւ ձին խաբար տվից,

Ասաց. «Դաւիթ, մի էրկումրտի.

Քշի, էսաց, էնքան օր տիւ սպանիս».

Կնքամ թրի-կրակի առջեվ կ'վասովին,

Կնքամ էլ խաչ պատրապին

Կ'պատուխասի, կ'մեռնին,

Կնքամ էլ ես իմ ոտաց յառջև կ'տրուրիմ,

Կնքամ էլ իմ քամին կ'թալի կ'մեռնին,

Կնքամ էլ ես իմ պուշով կ'սպանիմ,

Կնքամ էլ ես իմ ալինջով կ'սպանիմ.

Մի էրկումրտի, քըշի»:

Քշի ինց. Ասաց.

«Քանըմ, պիտի մէ խաբար էնիմ,

<sup>1)</sup> Մէկ կողմ. <sup>2)</sup> Փուշ.

Նոր էրթամ կուիւ, ասաց,  
«Վով քներ էք՝ զարթիւն կացէք,  
«Վով զարթիւն էք՝ ձիանք թամփէցէք.  
«Առանց մահ իք՝ ձե մահ իմ պիրեր.  
«Առանց կրէօղ՝ ձի խոզին կառնիմ \*).»

Ձին քշից. կնոց խոզար սպանից, մէկը վերաց կանգնաւ, Դարձաւ. մէկ էլ դարձաւ, խոզար էլ սպանից. էլի մէկը վերաց կանգնաւ, էրուն էլաւ, որ ջանդաքներ կըտանէր, մէկ խոլիւր մարդ «փոշտ» էրաց. (փոշտ կանչելն ինչ ի. — փոշտ կանչելն էնի, որ զօշում զինք ենան <sup>1)</sup> կ'տայ), էդ խոլիւր էկաւ Դաւթի կուշտ, ասաց. «Խոլիւր, հուա ես օխտ տարեկան իմ, աշխարհք յիմ մտիր. տե՛ ընչի՛ ընծի՛ «փոշտ » <sup>2)</sup> կ'կանչիս:

Ըսաց. «Դաւկիթ, գլխիւդ մեռնիմ. ես փոշտ չեմ կանչի, փոշտ կէնիմ, որ զօշում զինս եան տայ, ես իմ քեւ խետ զրուցիմ»:

Ըսաց. «Խոլիւր, եարի»,

Խոլիւր էկաւ էնտեղ, ասաց. «Դաւկիթ ասաց. «Ինչ ի, խոլիւր»:

Ըսաց. «Դաւկիթ, շատ մարդ կայ, մօրէն մէկ ի. շատ մարդ կայ, օլուխս-չօլուխս տէր ի. շատ մարդ կայ՝ մրազը վերաց ի, որ պըտի էրթաց կարգուի. տե՛ ընչի՛ էնունց մեղաց տակ կը մտնիս. Կնո-, հէրէ ախակէրդ էնտեղն ի, ինոյ թէ վար էնու սպանիր՝ մենս. քէօ ըռեաթն ինք, քեզի կուլուր կ'էնսենք. տե՛ ընչի՛ էդ մարդերու մեղաց տակ կ'մտնիս»:

Ըսաց. «Քիծայ, շատ լաւ ասիր, ինո-, ասաց, Մելիքի չափը պիւր կայնի, որ ես զիտնամ էնու չափը վարն ի. ինո-, զատացիր, տե՛ ափսում մարդ իս, իմ ձիու քամին քեզի չթալի վնասի»:

Խոլիւր ինոց Մելիքի չափը պիւր կան էկաւ <sup>1)</sup> ), իրան փափախ թալից. Դաւկիթ ցինացաւ. Զինք ինոց զատուն <sup>2)</sup> կանգնաւ. Դաւկիթ ձին քշից ինոց Մելիքի չափը վերաց.

#### Ժ.

Մելիք, անած էր. Մելիքի մէր, առսուն առջիկ չափը տակ նըստած էր.

Դաւկիթ ասաց. «Մալիկ, Մելիք վի իսան <sup>3)</sup> ես էկիր իմ կըռուկինք»:

Մէրն ասաց. «Էն էլ քէօ ախակէրն ի, չուր օխտ օր պիտի նի. իրիք օր քնիր ի, չորս էլ պըտի նի»:

\* ) Երգ է.

<sup>1)</sup> Ման եկաւ. <sup>2)</sup> Հեռուից.

<sup>3)</sup> Արթնացըռւ.

Պիրից գլուխնի խոփ թալից կրակի մէջ, կարմրցաւ, թալից Մելքը ոտաց վերայ. Մելիք ոտերաց էրացաւ, ոտ քաշից, էսաց. «օ, փուչ ընէք, աղջկնիր. իմ շուրիր թմբզ չէ» պահը. լրւիր ընձի կծին»:

Դաւիթ ասաց. «Մելիք, Մելիք, աչքերդ պաց արա, լի չի, եսն իմ, աչքերդ պաց արա»:

Որ աչքեր պաց արաց, զԴաւիթ տեհաւ, ասաց. «Ճուն շան օրթի. կետ դարձի չնա. էդ անունն էլ քեզի խամայ բաւական ի, որ մէկ ժամանակ դէւ ասիս՝ ես ձիով չնացի Մելիքի չադր, Մելիք վախեցաւ, իրա չադրից տիւս չէլաւ»:

Դաւիթ էսաց. «Ճուն մարդ էն ի, որ մարդեւ շան օրթի կ'կանչի, ես չիմ էրթաւ. եկիր իմ էստեղ, ես պիտի քէօ խետ կռուիմ. վեր էլի, որ ես տիւ կռուինք»:

Մելիք կըլնի, կասի. «Դաւիթ»:

Կասի. «Բնէջ ի»:

Կասի. «Ո՞նց կռուինք».

«Ո՞նց քէօ քէփ կռուի. կռուիս՝ գրօմշի նման ուլով զարկինք մէկի, չես ուզի՝ ձիով կ'կռուինք»:

Մելիքն էսաց. «Ախպէր, նօրաթով<sup>1)</sup> կռվինք»:

Էսաց. «Կռվինք»:

Էսաց. «Նօրաթ ինձի ի, թը քեզի»:

Էսաց. «Նօրաթ քը խամայ ի. ընձի մէր չունիմ, խէր չունիմ»:

Ընձի սպանես էլ՝ մարդ չկայ լաց ըլնի իմ վերայ. ես կ'նստիմ, տիւրիք անգամ ընձը զարկ, թէ որ սաղ մնացի՝ նօրաթ կ'կայ ընձի. թէ որ մեռաց՝ կ'պրծնիս»:

Դաւիթ նստաւ.

Մելիք ձին քշեց ինաց հեռու. ձին քշեց էկաւ. մէկ գերզ զար կից Դաւիթին. Դաւիթ խաչ—պատրազին տվից գերզի դէմ, թող տըլից Դաւիթի կլսի վերայ. Մելիքն էսաց. «Ափսուս, խոզար ափսուս, Դաւիթ շախինք—պախինք, զարկինք սպանինք»:

Դաւիթ էսաց. «Մելիք, հոլաց ես կամ, չիմ մեռիր»:

Մէ խելի էլ հեռացաւ, մէ գերզ էլ զարկից, էսաց. «Ափսուս, խոզար ափսուս, Դաւիթ շախինք—պախինք, զարկինք սպանինք»:

Էսաց. «Մելիք, հոլաց ես կամ, չիմ մեռիր»:

Մէ խելի էլ հեռու ինաց Մելիք. էկաւ մէ գերզ զարկից Դաւիթն, թող տուեց Դաւիթի կըլսի վերայ, ասաց. «Ափսուս, խոզար ափսուս, Դաւիթ շախինք պախինք, զարկինք սպանինք»:

Դաւիթն էսաց. «Մելիք, հոլաց ես սաղ իմ, չիմ մեռիր»:

Էսաց. «Որ սաղ իս՝ եկիր, նօրաթ քէօնն ի»:

<sup>1)</sup> Հերթով.

Դաւիթ վեր էլաւ, վեր էլաւ, տեսաւ որ վիզ ծռվէր էր, մէ խմբուղ զարկեց, էրան վիզ դզեց,

Էսաց, «ընչի դրի դէմ շիս կայնի»:

Մելիք էսաց. «Դաւիթ, ես կ'վախնամ. ես մտնիմ իմ ձիու փորի տակ»:

Դաւիթ էսաց Մելիքին. «Մի մտնի քեւ ձիու փուրի տակ. ուսուն գոզ գետին փուրի, մտի մէջ. ուսուն գոմշու կաշի սի թու քէօ վերաց. քէօ մին էլ թող կանգնի քէօ վերաց, մէկ դոր կը բաշխիմ նստըծուն, մէկ դոր կ'բաշխիմ քեւ մօր ծըծը կաթին, որ էն օր տէ ընճը կը խեղդէր՝ քէօ մէր չ'թողեց, մէկ դոր կ'զարկեմ, թի որ սաղ մնացիր՝ նօրաթ կ'հաց քեղի. ուսուն գոզ գետին փորից մտաւ մէջ, գիտմշու կաշի թալից ուր վերաց. մին էլ կանգնաւ վերաց. Մելիքը մէր էսաց. «Աղջկներ, էլէք բռնէք եացի խաղ էրէք. Դաւիթ օր կա՝ ազաք տղաց ի, կըրըշի ձեզի, դոր թու կ'զարկը Մելիքին էլ չի սպանի»:

Աղջկներ կընին եացի կ'պանին. խաղ կէնին. Դաւիթն էլ պիտի հեռու էց, Դաւիթ կանաւ ձիու կշտին, ասաց.

«Ցիշեա խէր կենդանին,  
Բարձր Աստուածածին,  
Խաչ-պատրապին  
Վըր իմ աջ թիվին,  
Զարկեմ զթուր կէծակին  
Կտրի զին, ուսուն գոմշու կաշին,  
Թալիմ Մելիքի գլխից. էրթաց  
Էրկու ոտաց օրթալրէն տիւ-ս հայ»:

Դաւիթ օր քաշեց զթուրն կէծակին, կրակ թըրը պիրնէն թափաւ. Մելիքի մէր ասաց. «Աղջկներ, թողէք զզեացին, ես կ'տեհնամ զթուրն-կէծակին, տր ք-նդի տուն Մելիքին».

Դաւիթ էսաց.

«Ցիշեա խէր կենդանին,  
Մարութայ բարձր Աստուածածին,  
Խաչ - պատրապին  
Վըր իմ աջ թիւին».

Կտրեց մին, կտրեց ուսուն գոմշու կաշի, թըրեց Մելիքի կէտի, պնաց էրկու ոտաց արանքէն տիւս էլաւ, թըրը կէօխ չնաց առեց Աև ջեր \*): Հրեշտակ թեվ տվեց յառջիվ, թէ չէ սև ջեր տընէր աշխարհք կառնէր Մելիք ասաց. «Դաւիթ, հալաց սաղ եմ». Խոբար չելա, թը

\* ) Հեռաւորութիւնն է ցոյց տալիս:

թէր կտրեր էր. Էսաց. «Թէ որ սաղ ես՝ վեր իլի, նօրաթ քէօնն ի»:  
Վուր վեր էլաւ՝ մէ կտուր դէս ինց, մէ կտուր դէն ինց. Աջակողմը Դաւիթ դրեց ձիու վերայ պիրեց ժամովպատրագով թալսել ավեց. ինչ ձախ կողն էր՝ մնաց էնտեղ անտէր, շըներ գիլեր կերան.

### ԳԱԿԻԹ ԵՒ ԽԱՆԴԻԿԻԹ ԽԱԹԻՒՆ

#### Ը.

Խանդիթ-խաթէն Խոյայ աղաք.

Ք-ռոսուն խատ փահկան

Բիրադի էկած Խանդիթի խամար.

Տենանք վոր մէկին որ կ'աւանի, առնի:

Մէկին էլ չ'խաւնաւ Խանդիթ խաթէն:

Երկու խատ աշըր ման կոլով

Եկան չնոցին Խոյայ աղաք.

Խանդիթ-խանում կանչեց

Էն աշըրտիկներուն, տարաւ որ սազ էրին:

Խ-բ-ը առեց Խանդիթի մօտից.

Սաց. «Ք-ռոսուն խատ

Ֆէրըդփահկան ինչի խամար էկած»:

Խանդիթն սասաց. «Եմէնն էլ

Լնձի խամար են եկած,

Մէկին էլ լրմ խաւնի, լրմ առնի»:

Սասաց. Խանդիթ խանում,

Քէօ լազրդին օր առնես»:

Տշ, Դաւիթն ի, Մէկրի տղէն»:

Սասաց. «Վ-ը տեղն ի».

Սասաց. «Սասնայ աղաք».

Սասաց. «Ձեզ թոյ փարայ տը տամ,

Երթէք Դաւիթին գէօվէք ընձի,

Դաւիթ ից էստեղ,

Դաւիթ տեսնամ որ զԴաւիթ առնեմ»:

Աշըրտեր Էլան սազ էնեղով

Կնոցին Սասնայ աղաք.

Կնոցին Դաւիթի կուշտ ասին. «Դ-կիթ,

Խանդիթ-խանում քէօ ումուզն ի»:

Դաւիթն Էսաց. «Լնձի խամար գէովացէք,

Տեսնենք աղէկ ի, թի վատ ի»:

Աշըրտեր Դաւիթին ասին.

«ինու սըւտակութեն կ'նմանի պմպակ,  
ինու ծըծեր կ'նմանի պմպակի քէօլանի<sup>1)</sup>  
ինու ճակատի լէնս օխտ թիզ ի, մէկ չարէց էլ աւելի.  
ինու աչքեր կ'նմանի շինու քսայի<sup>2)</sup>:

Դաւիթին ասաց.

«Աշըղտեր, տիւ պորով էկի»

Քանց լոռն անարատ ի,

Գէլու նման ես կատղաւ.

Քանց աշենավայ ջիւր՝

Խմ սիրտ զուլալ<sup>3)</sup> էր,

Գորնան սեղաւի նմանյ

Խմ սիրտ պղտորփաւ»:

Դաւիթին էկաւ Քէօլիկ-Զալալին հանեց.

Քէօլիկ-Զալալին խենաւ.

Ալոաստն (լասաւ) ձածւն<sup>4)</sup>:

Ճաշին էկաւ Կոռորդու.

Կէսօրուան էկաւ Բանքմահն,

Տեսաւ օր օխտ գիւթան գիւթան կէնէր.

Նստեր են խաց ուտելու:

Դաւիթին ասին նստի խաց անուշ էրա.

Էդ գիւթանքւորներ օխտ աւուր

Խաց-ջէր պիրիր ին:

Դաւիթին նստաւ խաց ուտելու.

Օխտ գիւթինի խաց ու ջէր կերաւ խմաւ,

Էկաւ օր պիտ էրթէր.

Օր կէրթէր՝ գիւթընուրքեր

Նստան զրուցին. «Օխտ աւուր

Խաց ջիւր էդ մենակ կերաւ.

Մենս ճամիսներ տիւն

Տասին կէսօր իք ինացի,

Ձէ խաց չի պրեեր ի

Թոէ օր ասենք կօնախ էկե մէկ մարդ

Ձէն հաւատայ.

Թասենք գիւմէշն ի կէրե՝ էլի չեն հաւատայ»:

Էդ խօսք Դաւիթ լսաւ, ասաց

«Տըղէրք, ի՞նչքամ տեղ պիտի

Գիւթան էնէք էդ օխտ օր,

<sup>1)</sup> Կծիկ; <sup>2)</sup> Ցախճապակէ աման; <sup>3)</sup> Պարզ, գիւտու:

<sup>4)</sup> Պատմողի ասելով գանւում է Մոկաց երկրին կից, գէպի արևմտաք.

Ասաց. «Էդ դոշտ պիւլէ-րով՝<sup>1)</sup> Պարսկաց պատմութեանը առ Երանք առ Վահագ պատմութեանը առ Ենինք»:  
 Դաւիթ էսաց. «Գիւմշըներ թողէ»:  
 Գիւմշըներ թողին:  
 Դաւիթ գիւմշնը պալատին<sup>2)</sup>  
 Թալեց իր ձիու դէօշ,  
 Զարկեց գիւմշան. մէկ խոզի չափ մնաց:  
 Մէկ մարդ ասաց. «Դաւիթ,  
 Կու քէօ հիւնար չի,  
 Կու քէօ ձիու հիւնարն ի»:  
 Դաւիթ ձիուց վէ էկաւ,  
 Գիւմշնի զնջիլ առեց իրան ձեռ.  
 Դաւիթ զինք զորկեց գիւմշան.  
 Գիւմշընւոր ասաց.  
 «Տըղաչ Դաւիթ որ կասեն  
 Աշխրբի մէջ՝ տէ ես,  
 Վոր տեղն որ կերթաս՝  
 Քիւ ոտ քարին չ'դիպնե.  
 Աստուած քեզի վատ օր շանք չ'տայ»:

## Բ.

Դաւիթ ձին խեծաւ քշեց ճամբախ. այսու առ զայլ պատմ զայլ Աթամի  
 Ցըրին ինց Խոյաց-տղաք. այսու առ զայլ դուռ առ զայլ  
 Համտէօլ էլ դռնապան էր.  
 Համտէօլ զտիւ փակեց.  
 Փակեց, գիւմշի չառեց ներս.  
 Դաւիթ էսաց, «Համտէօլ,  
 Տիւ բաց էրա, ընձի առնես»,  
 Համտէօլ էսաց.  
 «Խանդէթ-լսանում թամբընիր ի<sup>1)</sup>»,  
 Որ մտնի՝ տիւ-ո մի պանս»,  
 Ասաց. «Համտէօլ, որ տիւ-ո չես բանայ,  
 Քէօ մատ էդ դռան կողէն խան, մէկ առ զայլ կ'ունի ու մշկութ գանձան<sup>2)</sup>  
 Մէ պաքեմ, իմ սիրտն խովանաց.  
 Էս Խանդէթի խամար եմ էկեր,  
 Էստեղ կ'մնամ, չէօր լէօս կ'պացմի,

<sup>1)</sup> Ջոջակաւեռով. <sup>2)</sup> Ճղթայ:

<sup>3)</sup> Պատուիրել է:

ՆԵՐ Կ'Ի՞Մ ՆԵՐՍ»:

Համտէօլ որ իրան մատ

Դուան կողքէն խանեց՝

Դաւիթ թալեց համտէօլի մատ բռնեց.

Որ քէւեց՝ ոսաց դամարքեր<sup>1)</sup> կըտրաւ էկաւ,

Համտէօլ էսաց. «թող, տէռ, պոց էնիմ.

Տըղայ-Դաւիթ որ կասեն՝ տէ ես».

Տէռ պոց էրաւ, Դաւիթ առեց ներս.

Ըսաց. «Դաւիթ, քուսուն խատ

Ֆէրզգ-փահլրւան էկած ին,

Էնունց ձիանք գէօմ ին կապիր իմ,

Տեղ չունիմ որ քէ ձին կապիմ»:

Ըսաց. «Իմ ձին տար քշի գումի մէջ,

Էնիկ իրան տեղ կ'գտնի.

ԶՔիւռկիլի-Զալալին քշից գէմի մէջ.

Ին տուսուն ձիու եօնջէն-գորին

Մօսըքերուց առից,

Քուսունն էլ ժողվից պիրից

Դուան տմակ կայնան,

Համտէօլ չնաց մուշտովուղ տարաւ Խանդիթ-խաթէնին,

Ըսաց. «Դաւիթ էկաւ»:

Էն տուսուն խատ Ֆէրզգ փահլրւան լսան.

Պիրին ամէն մէկ մէ ոսաց գինի լցին,

Տանք Դաւիթ խմի խարբի,

Որ զարկինք սպանինք,

Խանդիթ-խանում Դաւիթ չառնի,

Որ Դաւիթին չառնի՝ վոր մէկին կառնի, թըղ առնի.

Քուսուն խատ թուր էլ

Քաշած ի դրած դաստախանի<sup>2)</sup> տակ,

Որ էլուն թրով զարկին զԴաւիթ սպանեն,

Դաւիթ որ կնաց՝

Եդ տուսուն խատ Ֆէրզգ-փահլրւան

Եդ տուսուն տասաց գինին տուրին Դաւիթին.

Եդ տուսուն տասաց գինին էլ խմաւ,

Ըսաց. «Էս ճնճղեկ չեմ,

Որ ընձի ճեր կուտէք

Գինու կարաս ընձի շանց տւէք,

<sup>1)</sup> Երակները:

<sup>2)</sup> Սփռոց:

Երթամ գինի խմեմ կամ խաց ուտեմ:

Մէկ կարաս օխտ տարվան քացալս-գինին

Դաշին շանց տվին.

Կնաց կէօխ մտցուց կարասի մէջ.

Էն մէ կարաս գինին բիրադի խամա.

Էկաւ դ-ստախանի վերայ նստաւ,

Խաց. «Համտէօլ, ինա ընծի խամայ խաց պեր»:

Համտէօլ ինաց խաց պերեց.

Դաւիթ խաց կէրաւ.

Խաց կերաւ պրնաւ, դ-ստախան վրցուց,

Տեսաւ որ ժուռուն թուր

Դ-ստախանի տակ դրած ին:

Ք-ուռունն էլ փաթթեց մէ մէկի, ասաց.

«Համտէօլ, տար քցի իմ ձիու խուրցին,

Մէկ տարի իմ ձիու խամար նալ կ'էնիմ»:

Համտէօլ տարաւ գցից խուրցին,

Էկաւ Դաւթի կուշտ:

Դաւիթ էսաց. «Համտէօլ,

Կնա Խանդիթ խաթիւնին ասա

Կոյ էստեղ տեսնիմ»:

Համտէօլ ինաց Խանդիթին էսաց.

«Դաւիթ կասի թըզ իոյ տենամ».

Խանդիթ խանում էսաց.

«Դաւթին ասաւ շատ մի փուզնա.

Աւաւու կերթանք Գիլլբաղի մէջ,

Գիլլբաղի մէջ մէ մէկ կ'տեսնանք»:

Մնաց յի-ր լէօս պ-ցվաւ.

Խանդիթ-խանում էկաւ,

Կ'ըն-ցին Գիլլբաղի մէջ.

Դաւիթ Խանդիթը երիս պագից,

Սիրտ չ'խովացաւ, ճակատն էլ պագից.

Էլի սիրտ չ'խովացաւ.

Երկու ծրծը օրթալը պագից.

Խանդիթ խանում մէ իւմրուղ

Զ-րկից Դաւթը պերան.

Երիք պուտ էրուն Դաւթի պերնէն էկաւ.

Օսաց. «Տիւ իմ յիրիս պակիր

Քիւ ջանիկիթընը խամար.  
 Տիւ իմ ճակատն էլ պաէիր.  
 Քիւ սիրու խամար,  
 Ընյի, տիւ զՕղն-Տօղն  
 Ընձի խամար դիլ<sup>1</sup>) իս պերի  
 (Օր տիւ իմ էրկու ծըծը օրթալզ կ'պագիս):»  
 Ասաց. «Խանդիթ-խանում,  
 Խարամ կենայ ընձի, օր ես քեզի չառնիմ, առաք բարի վաճի նու ուր  
 Զեր Օղան-Տօղան քը խամայ ուի պերիմ». աշխան վ վեց խոյս մի  
 Թողին էկան հնացին տուն.  
 Ցըրկուն մութ տվից.  
 Դաւիթ էլաւ կուոր կանգնաւ.  
 Ասուած կանչից. «Իմ Տէր Ասուած,  
 Եան տիւ ձի մախ<sup>2)</sup> ըմ տաս,  
 Եան կուիւ տաս, Օղան-Տօղան  
 Կեան էստեղ, կովինք:»  
 Ասուած Դաւիթին մախ չ'տվից.  
 Նա ինչ կուիւն էր՝ տվից:  
 Քնաւ, չիւր լէս պացվաւ.  
 Օղան-Տօղան զօշում կապին  
 Էկան Խոյայ տղքի վերաց.  
 Էն տասուն խատ Ֆէրզդ-փահլւան  
 Մէկ մէկին կասին. «Մինք կուիւ շինք էրթաչ, մարտ մարտ  
 Ես չուրս տարի, միննդ տարի  
 Էստեղ նստիր ինք.

Մենք խանդիթի իրիս շինք տեսիր.  
 Դաւիթն յէրէկն էկաւ,  
 Կնաց Գիւլը-բաղը մէջ,  
 Խանդիթն տեսաւ. Խանդիթի խետ քէֆ էրաց,  
 Թըղ Դաւիթն էրթաց  
 Օղան-Տօղանի խետ կուիւ էնի»:  
 Դաւիթ լսաւ էդ խօսք, ասաց.  
 «Կը՛ուշմալ<sup>3)</sup>, իս վուր կուիւ ուզիր իմ՝  
 Իմ ջանը խամար իմ ուզիր.  
 Ասուած կուիւ ինձի ի տվիր.  
 Ջեզի չեմ ասի, որ ինացէք կուիւ:  
 Դաւիթ Խանդիթին էսաց.  
 «Եկի իմ շուրիր լրւց:»

1) Դերի: 2) Մահ: 3) Հայհուանք է:

Պատարագ մատուցել տվից,

Եկը օրէնքն առից,

Զին խեծաւ չնաց,

Ասաց. «Խանդիւթ-խանում,

Ես որ կէրթամ կռիւ,

Իրիք օր որ կը լրմանաց՝

Եմ քամկէն կու հս.

Թէ որ սպանվաց՝ խաչ պատրազին

Գէօ իմ թևի վերայ կապած թ.

Են խաչով ընձի կճանչնաս,

Կպիրիս ժամով—պատրազով

Ընձը կ'վերցիս.

Թէ որ սաղ մնացի՝

Կու կո մէ մէկ կ'տեսնանք».

Դաւիթ ձին խեծաւ չնաց կռիւ.

Մէկ օր շատ դօշում սպանից.

Խաչ-պատրազին մոռցաւ,

Խաչ-պատրազու անուն չ'տվից,

Զ-իս թիւի վերայ իրիշկաց.

Որ ձ-իս թիւին իրիշկաց՝

Օդան-ծօղան ք-մ-նդ<sup>1)</sup> թալից, Դաւիթ սլունից,

Պերին տախտակ ծափին,

Դաւիթը կէօխ մէջէն տիւս խանին.

Օդան-ծօղան, էրկուսն թաղաւոր ինչոք գալի՛ս,

Նստան Դաւիթի թիւքերու վերայ,

Կիր ու խում էրին.

Պանակ դաշնիւթեան այն

Դիմար չէ ընտանած ոչ այն

Պանակ ապիս այն

Հայ հարթ մէտ պայման

Դիմու ոչ (Ենիք Պանակ մնան)

Թէ որ սպանվաց՝ այս այն

Առանամ-հերթաբառ այս

Գէօ իմ թևի վերայ կապած թ.

Են խաչով ընձի կճանչնաս,

Կպիրիս ժամով—պատրազով

Ընձը մընձի մաք մըրու

Ենիք պայման մաք մըրու

Առանամ-հերթաբառ այս

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

Առանամ-հերթաբառ այս

Պանակ ապիս այս այն

Դաւիթ սլունից այս այն

## Թ.

Խ-բար վ-ր տեղանց տանք.—

Սասնաց.

Ձէնէօֆ-Ցէօվան աստղ կ'ճանչնէր:

Ցըրկուն մութ էտու.

Ձէնէօֆ-Ցէօվան էլաւ տիւու.

Իրիշկաց, Դաւիթի աստղ տեսաւ,—

Նվագ էր, խիւան էր:

Կնկան ասաց. «Ճիրին-Անախուն Գիւհար,

1) Փոկ. (Ժիկափոկ պարան).

Եղանակ կազմակերպության մասին

իլ Մրազ<sup>1)</sup> ձին տիւս խան,

Դաւիթ նեղ տեղ ի ինկիր.

Եան Դաւթի լէշին<sup>2)</sup> կ'խասնինք,

Եան նաշին<sup>3)</sup> կ'խասնին,

Ծիրին Ընախտուն Գիւհար ասաց.

«Ձէնէօվ-Ցէօվան, Դաւիթ մտիր ի

Խանդիւթի ծոց.

Տիւ քի խամար կը գլնիս

Դւկի խամար էրազ կ'տեսնաս»:

Խարեց զՁէնէօվ-Ցէօվան.

Ձէնէօվ-Ցէօվան էկաւ ննաւ:

Կէս քիշերվան մէկ է տիւս էկաւ.

Իրիշկեց Դաւթի աստղին. Նվազիր էր,

Ասաց. «Ծիրին Ընախտուն Գիւհար,

Իլր Մրազ ձին տիւս խան.

Եան Դաւթի լեշին կ'խասնիմ,

Եան նաշին կ'խասնիմ.

Դաւիթ նեղ տեղ ինկիր ի.

Ելի կնիկ Ձէնէօվ-Ցէօվանի խետ կրվաւ.

Ասաց. «Տիւ չ'թողիր էս օր քնի. բայսու հիւսու»: Ծիրամիք:

Դաւիթ մտիր ի Խանդիւթի ծոց,

Քէֆ կանի, տիւ Դաւթի խամար էրազ կ'տեսնաս»:

Ելի Ձէնէօվ-Ցէօվան ինց ննաւ:

Աբլէօրականցին էր. Ձէնէօվ-Ցէօվան:

Տիւս էկաւ մէկ էլ.

Իրիշկեց Դաւթի աստղին.

Քէչ ի մնացիր՝ օր աստղ մեռնի:

Ձէնէօվ-Ցէօվան կնկան էսաց.

«Ըկ Մրազ ձին խան տիւս.

Կնիկ չէկաւ.

Մէկ լ-նգի<sup>4)</sup> զարկից,

Մէկ կողաշար կորդից.

Ձէնէօվ-Ցէօվան զինք ինաց

զՄրազ ձին տիւս էխան.

Ասաց. «Մուլրան Շատուած. Մրազ ձին,

Ցիփ ընձի կ'խասցիս Թոլան Դաւթին»:

Հսաց. «Ձէնք ցիրիկուն,

---

<sup>1)</sup> Զիուշ անունն է: <sup>2)</sup> Դիակ: <sup>3)</sup> Դագաղ:

<sup>4)</sup> Աքացի:

Ասաց. «պերանդ կուտրէր,  
2-նք լըրկուն տըղը լէշին խասնիմ, թը նաշին», բայ բայ նկատ  
Մուրադ Ասուած. Մրազ ձին «Ցիվի ընձի կ'խասցիս Թողան-Դաւթին».

Ասաց. «Ձէնէօվ-Յէօվան,  
Տիւ կարան իմ ք-մակ պախիս.  
Քի տը տամ արեգական դէմ քիւլ <sup>1)</sup> կէնիմ».

Ասաց. «ընձի կ'տամ քու փուրի տակ».

Ասաց. «Կրիրիմ քեզի կ'տամ գետին, Կերթաս յանդւնդ»;

Ասաց. «Կըլնիմ քիւ ամակ».

Ասաց. «ըլէ խեծի».

Ձէնէօվ-Յէօվան զձին խեծաւ, Վըցուց տվից արեգական դէմ.

Ձինք տվից իւր փուրի տակ.

Պիրից որ տէր գետին՝ Ձինք էլաւ ձիու ամակ.

Ձէնէօվ-Յէօվան մէ կէօխ զձին թողից Օխտ աւուր ճամբախ մնաց.

Ասաց. «Դակիթ, Դակիթ, բերանդ կուտրէր, Խաչ-պատրապին մտախան իս էրիր».

Խրօսագոր մէն օր առից ճանաչից, ասաց. «Եիշեամ խէր կինդանի,

Մարութափ բանձր Ասուարածին, Խաչ պատրապին

Վեր իմ աջ թևին».

Դակիթ փուր զօրեց՝ տախտակ ճղվաւ.

Դակիթ տիւս էլաւ.

Օղան-Ցօղան կապաւ դրից էնտեղ,

Ձինք մէ կնարէ <sup>1)</sup>, Ձէնէօվ-Յէօվան մէ կնարէ, կնարէ դիմ

եդ զօշում բիրադը ջրտին.

Կիան մէ տեղ, մէ մէկ ճանշցան.

Դակիթ Ձէնէօվ-Յէօվանին ասաց.

«Մողեաթ կաց, օր Օղան-Ցօղան չ'փախչին».

Իս կերթամ ջրի վերայ կ'լվացվիմ, Կ'դառնամ կ'իւմ կ'երթանք».

(Կը շարունակուի)

Ա. Օբեղեամ.

1) Մոխրի: